



# Ազգարարության Trumpet's Sound ինո՞ն

52-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱՆԻԱ  
ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ 2021





# Հայ Ավելարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION  
PUBLISHED BY THE  
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH  
112 SAILORS BAY ROAD, NORTHBridge,  
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN  
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH  
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057  
email: pastor@armenianbrethren.org  
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՌԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերքը Սիդնեյի Հայ Ավելարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույնեցյան:

Այս թերքը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցենով:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Զորացի՞ր, քաջասի՞րտ եղիր ..... Հովիվ՝ Հրաչ Գույնեցյան

Եղե՛ք արագաշարժ, եղե՛ք ծանրաշարժ..... Ներ Բուքման

Եղիացի աղոթքները..... Ուես Տիրլավ

Սաղմոսների եռաբանություն..... Դոն Սթորմը

Գառնուկն ու կճիքները (2)..... QMBC պանորամա

Արդյո՞ք մահը վերջն է ..... Վեր. Հովսեփ Հովսեփյան

Մեկ մարդու պես հավաքվել ..... Դամիել Ջեմս

Հավատացյալի կյանքը..... Չեզո Բասսարա

Աստված ամենուրեք է..... Քաղված

Հավատք, հույս, սեր..... Հովիվ՝ Գառնիկ Ալբելյան

## Հորացի՛ր, քաջասի՛րտ եղիր

 աճախ լսում ենք մարդկանց մասին, ովքեր վախենում են՝ չիմանալով՝ ինչ որոշում կայացնել կամ ուր գնալ: Ոմանք չեն ուզում նորությունները դիտել, քանի որ ոչ մի լավ բան չեն լսում, և ամեն օր ավելի վատ է, քան նախորդ օրը:

Մովսեսը 40 տարի քայլեց անապատում՝ փորձելով մարդկանց սովորեցնել լսել ու հնազանդվել Աստծուն: Նրա մահից հետո Հեսուն դարձավ Խրայելի առաջնորդը: Աստված նրան ասել էր, որ պետք է դառնա խրայելացիների նոր առաջնորդը:

Բոլոր խոսուումները, որոնք Աստված նախապես տվել էր Մովսեսին, փոխանցվեցին Հեսուին: Լավ կլինի Հեսուի գիրքը ամենասկզբ-քից կարդալ:

«Սի՞թե չեմ հրամայել քեզ՝ զորացի՛ր, քաջասի՛րտ եղիր, մի՛ վախենա և մի՛ զարդուիրիր, քանի որ քո Տեր Աստվածը քեզ հետ է, ուր էլ որ գնաս» (Հեսու 1:9):

Ինչպիսի՛ քաջալերանք է: Ուշադիր կարդացե՛ք նաև 8-րդ համարը, որն ասում է.

«Օրենքի այս գիրքը քող քո բերանից չհեռանա, գիշեր ու ցերեկ մտածի՛ր դրա մասին, որպեսզի նրա մեջ ամբողջ գրվածը պահես ու կատարես. քանի որ միայն այդ դեպքում գործերդ կբարգավաճեն, և հաջողություն կգտնես» (Հեսու 1:8):

Տերը նույն կերպով մեզ է քաջալերում այսօր: Մենք պետք է կարդանք Աստվածաշունչը, խորհրդածենք Նրա խոսքերի շուրջ ու հետևնենք Հիսուսին: Սա է հաղբանակի միակ ճանապարհը: Եթե հետևում ենք Հիսուսին, վախս անհետանում է: Եթե հետևում ենք Նրան, լցվում ենք Սուրբ Հոգու զորությամբ:

Հեսուն գիտեր, որ չի կարողանա ժողովրդին առաջնորդել, եթե Տերը իր հետ չլինի: Այսօր էլ այդպես է: Մենք նույնապես կարող ենք ասել, որ եթե Տերը մեզ հետ չլինի, չենք կարող հաղթող լինել:

Հայացքդ ուղղի՛ր դեպի Հիսուսը,  
Լիովին նայի՛ր Նրա հիանալի դեմքին,  
Եվ աշխարհային բաները միանգամից  
Կանհետանան Նրա փառքի ու շնորհքի լույսի ներքո:

Արդյոք պատրա՞ստ եք ձեր հայացքը Նրան ուղղելու: Արդյոք պատրա՞ստ եք Նրա դեմքը փնտրելու: Արդյոք պատրա՞ստ եք Նրա խոսքերի շուրջ խորհրդածելու:

Խոստումը ձերն է. «Չորացի՛ր, քաջասի՛րս եղիր, մի՛ վախենա և մի՛ զարհուրիր, քանի որ քն Տեր Աստվածը քեզ հետ է, ուր էլ որ զնաս»:

Հ. Գ.

## **Եղե՛ք արագաշարժ, եղե՛ք ծանրաշարժ**

«Ուստի, իմ սիրելի՛ Եղբայրներ, ամեն մեկը քող լսելու մեջ արագաշարժ, իսկ խոսելու կամ բարկանալու մեջ ծանրաշարժ լինի, քանի որ մարդու բարկությունն Աստծո արդարությունը չի կատարում» (Հակ. 1:19-20):

Այս նամակը գրված է Տեր Հիսուսի Եղբայր Հակոբոսի կողմից: Այն կոչվում է Նոր Կտակարանի Առակաց գիրք և խկապես պարունակում է և՛ գործնական, և՛ խորը երկնային իմաստություն: Մենք դա տեսնում ենք վերը բերված համարում:

Առաջինը, ինչ նկատում ենք, այն է, որ այս խոսքը մեկուսացված չէ, քանի որ Հակոբոսն իր պատվերն սկսում է՝ օգտագործելով «ուստի...» բառը: Որպեսզի հասկանանք, թե ինչի մասին է Հակոբոսը խոսում, պետք է նայենք նախորդ համարին:

«Նա [Աստված] Իր կամքով մեզ ծնեց ճշմարտության Խոսքով, որ մենք Իր արարածների մեջ առաջին պտուղների պես լինենք» (Հակ. 1:18):

«Մեզ ծնեց», այսինքն՝ Ավետարանի միջոցով վերստին ծնեց «ճշշմարտության Խոսքով», որպեսզի հատուկ ժողովուրդ լինենք՝ Տիրոց համար առանձնացված, ճիշտ այնպես, ինչպես իին օրերում Տիրոց համար առանձնացվում էին բերքի առաջին պտուղները:

Սա նշանակում է, որ մենք ունենք և մեծ արտոնություն, և մեծ պատասխանատվություն Աստծո համար հաճելի կյանքով ապրելու և Նրա սիրո ու շնորհքի ճշմարիտ վկան լինելու մեջ: Այդ իսկ պատճառով Հակոբոսը գրում է. «Ուստի, իմ սիրելի՝ Եղայրներ...»:

Եթե չիմանայինք, թե այդ համարին ինչ է հաջորդում, ապա կկարողանայի՞նք կոսիել, թե ի՞նչ էր ասելու Հակոբոսը: Չեմ կարծում: Ինչո՞ւ այդ համարին հետևում է լսելու մեջ արագաշարժ, իսկ խոսելու կամ բարկանալու մեջ ծանրաշարժ լինելու պատվերը: Դրան պատասխանելու համար եկեք տանք մեկ այլ հարց: Ինչպիսի՞ն է լինում լսելու մեջ արագաշարժ և խոսելու ու բարկանալու մեջ ծանրաշարժ մարդը:

Տղամարդը կամ կինը, ով արագաշարժ է լսելու մեջ, հետաքրքրվում է նրանով, ում հետ խոսում է: Նա ուզում է հասկանալ նրան, ուզում է իմանալ նրա սիրտը ու նրանից դասեր քաղել:

Այն մարդը, ով ծանրաշարժ է խոսելու մեջ, գիտի, որ միայն Սուրբ Հոգին ունի հավիտենական կյանքի խոսքերը: Նա ուզում է խոսել Նրա խոսքերը, արտահայտել Նրա իմաստությունը և ոչ թե իրենը:

Այն մարդը, ով ծանրաշարժ է բարկանալու մեջ, հեշտությամբ չի վիրավորվում կամ զայրանում, քանի որ նա իր կյանքը Տիրոցն է հանձնել և գիտի, որ միայն Աստծո մեծ շնորհով են ներփած իր մեղքերը: Նրա կյանքը պահված է Քրիստոսի հետ՝ Աստծո մեջ (Կող. 3:3), ուստի իր դիրքի ու համբավի համար պայքարելու կարիք չունի:

Սերը, իմաստությունը, խոնարհությունն ու շնորհքը բնութագրում են վերը նշված քրիստոնյաներին: Նրանք սովորել են իրենց կյանքն ապրել Աստծո հետ: Նրանց կյանքը նման է մքության մեջ վառվող լույսի՝ Տեր Հիսուսի փրկարար զորության տեսանելի վկայությանը:

Սենք ուզում ենք, որ Աստծո արդարությունը գործի մեր կյանքում, մեր ընտանիքում, եկեղեցում և նրանց մեջ, ովքեր դեռ չեն գտել Փղոկ-

չին: Բայց մարդու բարկությունն Աստծո արդարությունը չի կատարում: Մեր մարմնավոր, եսակենտրոն, ինքնարդարացնող և մեղավոր կյանքը երբեք չի առաջացնի Աստծո արդարությունը: Սակայն երբ սովորենք ապրել Տիրոջ կոչման համաձայն, Նա կգործի մեր մեջ և մեր միջոցով Իր փառքի համար:

Ուստի, իմ սիրելի՝ Եղբայրներ...

Նեյլ Բուրման

## **Եղիայի աղոթքները**

**Գ Թագ. 16-18**

**Ա**ղոթել սովորելը տեխնիկա չէ, որին տիրապետում եք ինչպես հեծանիվ կամ մերենա վարելուն, երբ ինքներդ ճեզ մտածում եք՝ ասելով. «Հիմա որ դրան տիրապետում եմ, ել ուրիշ քան սովորելու կարիք չունեմ»: Դա շատ ավելի նման է զիտնականի հետազոտության: Դուք անընդհատ նորություններ եք քացահայտում ու դա անելու ընթացքում նոր քանի սովորում: Գիտնականների օգտագործած մեթոդներից մեկը միմյանց գրություններն ուսումնասիրելն է: Գիտնականները զիտաժողովներ են անցկացնում, զիտական ամսագրերում հոդվածներ են հրապարակում, որպեսզի ուրիշների փորձառությունից դասեր քաղեն:

Աստվածաշունչը լի է աղոթող տղամարդկանց և կանանց աղոթքներով ու փորձառություններով: Այս փորձառությունները գրված են, որպեսզի կարողանանք որիշներից սովորել: Խնդիրն այն է, որ չզիտենք, թե ո՞ր հերոսից սկսել: Մենք կարդում ենք հետևյալ հերոսների մասին.

- Ենովքը, ով Աստծո հետ քայլեց, և Աստված նրան, առանց մահը ճաշակելու, Երկինք տարավ:
- Արրահամը, ով Աստծո հետ սակարկեց քաղաքի ճակատագրի վերաբերյալ:

- Մովսեսը, ով Աստծո հետ դեմ առ դեմ խոսեց:
- Դավիթը՝ սաղմոսներից շատերում:
- Աննան՝ կին, ով աղոքքի միջոցով նվաճեց անձնական ողբերգությունը:
- Եղիան, ով փոխեց ազգի ընթացքը:
- Դանիելը, որի աղոքքում ներառված էր դիվային ուժերի հետ հոգևոր պատերազմը:
- Նեեմիան՝ իիանալի դեկավարը, ով փլատակներից վերականգնեց քաղաքի պարիսպները:

Աստվածաշնչում նաև գրված են Քրիստոսի, Մարիամի, Պողոսի, Պետրոսի և շատ ուրիշների աղոքքները: Իրականում դժվար է գտնել մեկին, ով իսկապես Աստծո համար մեծ գործեր է արել և աղոքքի կյանք չի ունեցել:

Ի՞նչ կարող ենք սովորել մի մարդու աղոքքից, որին Աստվածաշնչը նկարագրում է որպես սովորական մարդու: «Եղիան մեզ նման կրերի ենթակա մարդ էր» (Հակ. 5:17): Մենք կրնարկենք Եղիայի աղոքքների երեք իիմնական փորձառությունները՝ պատասխանված աղոքք, անկեղծ աղոքք և լսվող աղոքք:

## **Պատասխանված աղոքք**

Մեր աղոքքների պատասխանվելու միջոց գտնելը մի բան է, որը բոլորին հետաքրքրում է: Այնուամենայնիվ, աղոքքը շատ ավելին է, քան պարզապես Աստծուն մեզ համար բաներ անել ստիպելը: Շուտով հայտնաբերելու ենք, որ աղոքքի պատասխանն ստանալը կանոնոր է, բայց ոչ այնքան, որքան կարծում ենք: Աղոքքն իրականում փոխում է մարդկանց:

Ունենք մի սովորական մարդ, ով աղոքում է անձրևի համար: Խսուայելում երեքովելս տարի անձրև չէր եկել: Մինչ Եղիան աղոքում էր, ամպերը ձևավորվեցին, ու հորդառատ անձրև եկավ: Արդյոք սա այն ամե՞նն է, ինչ կարող ենք սովորել: Աղոքքի այս տպավորիչ պատասխանը հասկանալու համար պետք է ավելի խորլ թափանցենք:

այս աղոքքի շուրջ եղած իրադարձությունների մեջ: Եղիան ապրում էր այն ժամանակահատվածում, երբ Խորայելը գտնվում էր Աքաար թագավորի իշխանության տակ. մի մարդ, որը ամբարիշտ ու չար էր: Աքաարն ամուսնացավ հարևանի հեթանոս ազգի մի արքայադստեր հետ: Նրա անունը Հեղաքել էր և որպես թագուհի՝ նա Խորայել բերեց իր հայրենիքի կուռքերը: Նրանց մեջ գլխավորը Բահաղն էր: Նա եղանակի ու բերրիության աստվածն էր: Երկրպագությունը ներառում էր Խնջույքներ, զոհեր, արտասավոր պարեր ու տաճարային մարմնավաճառներ: Բահաղի երկրպագության մեջ ներառված հեշտափությունից գրավված լինելով՝ խորայելացիները լքեցին իրենց արդար Եհովային: Սա հանգեցրեց երաշտի:

Արդյոք տեսա՞ք, թե ինչ արեց Եղիան, որպեսզի պատասխանվի իր աղոքքը:

## **1. Նա խոստովանեց հայտնի մեղքը**

Նա խոստովանեց երկրում Բահաղի երկրպագության մեղքը: Նա սպանել տվեց Բահաղի մարգարեներին ու մարդկանց ապաշխատության առաջնորդեց:

## **2. Նրա աղոքքը Աստծո Խոսքի համաձայն էր**

Ուշադրություն դարձեք, որ Եղիան զիտեր Աստծո Խոսքը և զիտեր, թե ինչն է առաջացրել երաշտը (Բ Օր. 11): Եթե մարդիկ Աստծո համար հաճելի կյանքով ապրեին, ապա անձրև կգար:

## **3. Նա հավատքով աղոքեց**

«Վեր կաց, կեր ու խմի՛ր, քանի որ հորդառատ անձրևի ձայն է լսվում» (Գ Թագ. 18:41): Իրականում այդ պահին ընդհանրապես անձրև չէր գալիս: Երկնքում նոյնիսկ մեկ ամաց չկար. այն այնպիսին էր, ինչպիսին վերջին երեքուկես տարիների ընթացքում էր: Եղիան պարզապես զիտեր, որ իր աղոքքը պատասխանվելու է, քանի որ այդ ամենը ներդաշնակ էր Աստծո հայտնած խոսքին: Սա ցույց տվեց նրա հավատքը:

## 4. Նրա աղոքքը անկեղծ էր

Նա կռացավ մինչև գետին ու դեմքը դրեց ծնկների արանքում: Եղիան հոգ էր տանում. նա խոնարհվեց ամենազոր Աստծո առաջ և՝ սրտով, և՝ մարմնով: Մարտին Լյութերն ասել է. «Եթե աղոքքի նետը պետք է երկինք սլանա, ապա այն պետք է արձակվի ամբողջությամբ ծուած աղեղից»:

## 5. Նրա աղոքքը հարատև էր

Եղիան աղոքեց, իսկ հետո ուղարկեց իր ծառային՝ տեսնելու, թե արդյոք ամպերը երևում են: Վեց անգամ ծառան նայեց հանգիստ ծովին, որը շողում էր բոցավառ արևի և անամայ երկնքի տակ: Յոթերորդ անգամ նա տեսավ մի փոքրիկ ամապ: Եղիայի համար դա բավական էր: Նա ասաց ծառային, որ գնա և Աքաարին ասի, որ շարժվի, եթե չի ուզում ցեխի մեջ մնալ. «Երկինքը սևացավ ամպելից ու հողմից, և սաստիկ անձրև իջավ»: Այնուհետև Եղիան վագեց Աքաարից առաջ՝ քառասուն կիլոմետր մինչև Հեղքայել: Աղոքքը պատասխանվեց:

Հիշեք Հակոբոսի ասածը, որ Եղիան մեզ նման կրքերի ենթակա մարդ էր: Պատասխանված աղոքքի բոլոր տարրերը մենք նույնպես կարող ենք կատարել՝

- դարձի գալով հայտնի մեղքերից,
- աղոքելով Աստծո կամքի համաձայն,
- հավատք ունենալով,
- եռանդուն և հարատևող լինելով:

Ուրս Տիրլավ

«Թող Քրիստոսի Խոսքը ձեր մեջ բնակվի առատապես, կատարյալ իմաստությամբ. միմյանց սովորեցնելով ու հորդորելով սաղմոսներով, օրհնություններով և հոգևոր երգերով, չորհակալությամբ լի՛ ձեր սրտերում Տիրոջը երգելով»:

**Կող.** 3:16

## Սաղմոսների Եռաբանություն

### Սաղմոսներ 22 – 24

**Ա**յս երեք սաղմոսները Դավթին են պատկանում: Պատկերացնում ենք, որ դրանք գրվել են շատ տարրեր հանգամանքներում, այդուհանդերձ մեզ համար քաջալերական ուսուցում են պարունակում:

Այս սաղմոսներից երկուսը մեսիական են: 22-րդ սաղմոսը վերաբերում է Տեր Հիսուսի մահվանը, իսկ 24-րդը՝ Նրա հաղթանակին: Որոշ մեկնաբաններ 23-րդ սաղմոսը չեն ընդունում որպես մեսիական, բայց քանի որ այն հստակ կերպով պատկերում է Տեր Հիսուսին՝ որպես մեր հոգիների Հովվի, ապա դա բացառելու պատճառ չունենք:

Կան որոշ մտքեր, որոնց պետք է ուշադրություն դարձնել: Առաջին՝ մեսիական սաղմոսներում երթենն դժվար է որոշել, թե տվյալ սաղմոսում որքա՞նն է սաղմոսներգոյի անձնական փորձառությունը և որքանը՝ ոչ: Սա հատկապես վերաբերում է 22-րդ սաղմոսին: Դրա մեջ գրված են մտքեր, որոնք ստվորական մարդու փորձառությունից վեր են: Արդյոք Սուրբ Հոգին առաջնորդե՞ց Դավթին, որպեսզի խոսի մեծ Դավթի մեծ Որդու մասին: Արդյոք Դավթը փորձառե՞ց մի բան, որ Աստծո Հոգին նրան ցույց տվեց:

23-րդ սաղմոսը կարելի է համարել հովվի մտքեր, ով մտածում է մեծ Հովվի մասին: Այս սաղմոսը գուցե գրվել է Դավթի երիտասարդության տարիներին:

24-րդ սաղմոսը գուցե գրվել է այն ժամանակներում, երբ Ուխտի տապանակը տեղափոխվեց Երուսաղեմ: Դավթիը մտածում է Տիրոջ վերջնական հաղթանակի ու սրբության մասին, որն անհրաժեշտ է Տիրոջ ներկայության մեջ մտնելու համար:

Երեք սաղմոսները կազմում են ուսուցողական Եռաբանություն.

- 22-րդ սաղմոսը խաչի սաղմոսն է, որը պատկերում է Փրկչին, Բարի Հովվին (Հով. 10:11):

- 23-րդ սաղմոսը հովվական գավազանի սաղմոսն է, որը պատկերում է Սեծ Հովվին (Եքք. 13:20):
- 24-րդ սաղմոսը թագի սաղմոսն է, որը պատկերում է գերիշխանին, Հովվակետին (Ա Պետ. 5:4):

Այս երեք սաղմոսներում ունենք իրար լուրջ հակադրող տեսարաններ: 22-րդ սաղմոսը պատկերում է մի մարդու, ով հոգու խոր նեղության մեջ է և մեծապես տառապում է: 23-րդ սաղմոսը պատկերում է մի մարդու, ում մասին հոգ է տարփում կյանքի յուրաքանչյուր իրավիճակում: 24-րդ սաղմոսը ցույց է տալիս, թե ով կարող է մտնել գերիշխանի ներկայության մեջ:

## **Սաղմոս 22. Փրկչի սաղմոսը**

Այս սաղմոսի փորձառությունները կարծես թե չափազանց ծանր են Դավթի համար: Արդյոք նա իր կյանքի փորձառության մասի՞ն է խոսում, թե՝ Սուրբ Հոգուց առաջնորդվելով՝ գրում է ոչ թե իր, այլ Սեփայի մասին:

Դավթի տեսանկյունից սաղմոսը արտացոլում է անցյալում Աստծո կատարած գործերը: Դավիթն ընդունում է իր անարժանությունը և այն, որ Աստված օգնել է իրեն անցյալում: Չնայած որ Դավիթը բախվել էր թշնամիների ծաղրանքին, սակայն Աստծո Հոգին նրան ավելի հեռու էր տանում, քան նրա սեփական փորձառությունը, որպեսզի նա մարգարեանա խաչի տեսարանի մասին:

Այս սաղմոսում Տեր Հիսուսի խաչին վերաբերող չորս ուղղակի և մի քանի անուղղակի հրում կա: «Աստված իմ, Աստված իմ, ինչո՞ւ ինձ լրեցիր» (հմք 1) արտահայտությունը տագնաապի ճիշ է: Սրանք են այն բառերը, որոնք Տերն արտասանեց խաչի վրայից երեք ժամվա խավարի վերջում: Սա միակ դեպքն է, եթե Տերը Աստծուն՝ որպես Հոր չի դիմում: Բայց Նա տառապում էր մեր մերքի համար, Նա Աստծուց լրվեց, որպեսզի մենք երբեք չբաժանվենք Նրանից:

Կրոնական առաջնորդները ծաղրում էին Տիրոջը, երբ Նա տառապում էր: Նրանք ասացին, որ եթե Նա Իր հույսը Տիրոջ վրա է դրել, ուրեմն թող Տերը փրկի Նրան (հմք 8): Նա հեշտությամբ կարող էր փրկել: Ձերբակալության պահին Նա ասաց, որ կարող էր կանչել

ավելի քան 12 լեզեռն իրեշտակների՝ Իրեն օգնելու համար, բայց այդպես չարեց: Նա չփրկեց Իր անձը, քանի որ վճռական էր մեզ փրկելու հարցում:

«Ծակեցին ձեռքերս ու ոտքերս» (հմք 16) արտահայտությունը մարգարենություն էր Փրկչի մահվան ձևի վերաբերյալ: Խաչելությամբ մահանալը հայտնի չէր սաղմոսերգչի օրերում, բայց նա, Աստծո Հոգուց առաջնորդվելով, գրեց Փրկչի մահվան ձևի մասին, ով մահացավ մեր մեղքերի պարտքը վճարելու համար:

«Իմ հագուստները բաժանում են իրենց մեջ» (հմք 18) արտահայտությունը ցույց է տալիս Տիրոջ խաչելության մեջ ներգրավվածների անտարբերությունը:

Տիրոջ մահվան մասին կան նաև անուղղակի հղումներ: Նրան ընդունացան ուժեղ մարդիկ՝ Բասանի ցլերը (հմք 12): Նա փորձառեց ֆիզիկական տկարություն. Նրա «ուժը չորացավ» (հմք 15): Խաչելության ֆիզիկական հետևանքները նշանակում էին, որ Նա կարող էր հաշվել Իր բոլոր ուկորները (հմք 17):

21-րդ համարից հետո խոսվում է Հազարամյա թագավորության մասին: Տառապողը մեծ ժողովում առաջնորդելու է Իր ժողովրդի փառաբանությունը: Կզա մի օր, երբ Նրա թագավորությունը կտիրի բոլոր ազգերի վրա:

Ո՞րն է այս սաղմոսի նշանակությունը: Տեսնում ենք մի մարդու, ով շրջապատված է իր թշնամիներով: Նա պաշտպանություն է խընդում, բայց ոչ վրեժ լուծելու համար: Մենք տեսնում ենք մի մարդու, ով լիովին կախված է Աստծուց:

Երբ մտածում ենք այս սաղմոսի մասին, ապա հասկանում ենք, որ նա չէր կարող այդ խորքերը գրել առանց Հոգու առաջնորդության: Խաչելությամբ մահը հռոմեական, ոչ թե հրեական պատմի մեթոդ էր: Սաղմոսը նկարագրում է տառապող Մեսիային: Բայց մի օր Նա կլինի հաղթական Թագավորը: Մեր պարտականությունն է այսօր ենթարկվել Նրա իշխանությանը, որպեսզի գալիք օրում ուրախանանք Նրա ներկայության մեջ:

Դոն Սթորմը

## Գառնուկն ու կնիքները (2)

**Ը**ատ սրավիեցնող է այն միտքը, որ եթե մարդիկ հրաժարվում են Աստծուն ու Գառնուկին փառք տալուց, ապա զալու է մի օր, երբ ստիպված են լինելու դա անել: Իրեն տրված տեսիլքում Հովհաննեսը լսեց, որ ամեն մի արարած, որ երկնքում է, երկրի վրա և երկրի տակ, և դրանք, որ ծովում են, ու այն ամենը, ինչ որ նրանց մեջ կա, ասում էին. «Գահի վրա նատողին և Գառնուկին օրինություն ու պատիվ, փառք ու զորություն հավիտյան հավիտենից»: Վերջում չորս կենդանիներն ասացին՝ Ամեն, և երեցները ընկան ու երկրապագեցին Նրան: Այդպիսին է Երկնքի շարունակական փառաբանությունն ու երկրապագությունը:

### 4. Գառնուկը բացում է վեց կնիքները (6:1-17)

Այդ կնիքների բացումով մեկնարկում են աստվածային դատաստանները, որոնք յոթ տարի թափվելու են երկրի վրա: Մենք հավատում ենք, որ կնիքների դատաստանները զբաղեցնում են Սեծ ներության առաջին 3,5 տարիները, իսկ վերջերի ու թասերի դատաստանները՝ վերջին 3,5 տարիները: Հատկանշական է, որ դատաստաններն սկսվում են սպիտակ ձիով, որի հեծյալը համաշխարհային գալիք դեկավարն է, ու վերջանում են նույնական սպիտակ ձիով, որի հեծյալը ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ՏԵՐԵՐԻ ՏԵՐՆ Է (Հայտ. 6:2, 19:11-16): Համաշխարհային գալիք դեկավարը ների հոգով է գործելու, բայց նա ները չէ (տե՛ս Հայտ. 13:11):

Ոմանք սովորեցնում են, թե 6:2-ի սպիտակ ձիու հեծյալը Քրիստոսն է, բայց կան շատ պատճառներ, թե ինչու դա չի կարող Նա լինել: Կան նաև պատճառներ, թե ինչու նա վերածնված Հռոմեական կայսրության առաջնորդն է կամ դեկավարը (սրա մասին կխոսենք առաջիկա սերտողություններում): Ահա մի քանի պատճառներ.

1. Սպիտակ ձիու հեծյալը երկրի վրա է երևում, և քանի որ այս դատաստանները տեղի են ունենալու յոթ տարիների սկզբում, ապա հեծյալը չի կարող Քրիստոսը լինել: Նա երկիր չի գալու

մինչև այդ ժամանակաշրջանի ավարտը (տե՛ս Հայտ. 19:11-16, Մատք. 24:30, Դան. 7:13-14):

2. 6:2-ի պսակն ընդամենը գլխի ժապավեն է, սակայն 19:12-ի «շատ թագեր» արտահայտությունը մատնանշում է այն Մեկին, ով ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ՏԵՐԵՐԻ ՏԵՐՆ Ե:
3. 6:2-ի «պսակ» բառի հունարեն բառը ամբողջ Նոր Կտակարանում միայն այստեղ է օգտագործված: Մյուս կողմից՝ սուրբ օգտագործվում է Հիսուսի կողմից Հայտ. 19:15-ում, 1:16-ում և 2:12, 16-ում:
4. Սպիտակ ձիու հեծյալը հավանաբար պնդելու է, որ ինքն աշխարհի գերազույն դեկավարն է: Տեր Հիսուսն զգուշացրեց Իր աշակերտներին, որ շատերը կգան Իր անունով՝ ասելով, թե Քրիստոսն են (Մատք. 24:4-5): Երբ Քրիստոսը գա, ոչ մի անորոշություն չի լինելու: Նա ասաց. «Որովհետև, ինչպես կայծակն է դուրս գալիս արևելքից և երևում մինչև արևմուտք, այնպես էլ կլինի Մարդու Որդու գալուստը» (Մատք. 24:27):

Առաջին շրու կնիքները բացվելիս Հովհաննեար ձիերի վրա նստած շրու հեծյալներ է տեսնում հաջորդականությամբ: Առաջինը, ինչպես արդեն նշեցինք, գերազույն դեկավարն է, իսկ մյուսները՝ նրա գործընկերները: Քրիստոսն այդ պահին ուղղակիորեն չի դատում աշխարհին. Նա բույլ է տալիս, որ գերազույն դեկավարն ու նրա չար ուժերը դատաստան իրականացնեն:

Սպիտակ ձին խաղաղություն է ներկայացնում (այս դեպքում՝ կեղծ խաղաղություն), կարմիր ձին պատերազմ է ներկայացնում, սև ձին՝ սով և հիվանդություններ, իսկ դեղնավուն ձին՝ մահ: Սա ընդհանուր առմամբ համընկնում է Զիթենյաց սարի վրա Տեր Հիսուսի՝ Իր աշակերտներին պատմածի հետ: Նա ասաց, որ կլինեն կեղծ քրիստոներ, պատերազմներ, պատերազմների լուրեր, սովեր ու երկրաշարժեր (տե՛ս Մատք. 24:4-8):

Դան. 9:27-ից իմանում ենք, որ յոթամյա ժամանակահատվածի սկզբում գերազույն դեկավարը հրեաների հետ համաձայնություն

Է կնքելու՝ թույլ տալով նրանց ազատորեն հետևել իրենց կրոնին ու զոհեր մատուցել տաճարում: Նա նրանց ապահովություն, խաղաղություն և անվտանգություն է խոստանալու: Այնուամենայնիվ, 3,5 տարի անց գերազույն դեկավարը պաշտոնապես խախտելու է այդ համաձայնությունը: Սակայն մինչ դա տեղի կունենա, խաղաղությունը վերացվելու է երկրի երեսից, ու մարդիկ սպանելու են միմյանց (տե՛ս Հայտ. 6:4): Պողոս առաքյալը սա նկատի ուներ, երբ գրեց. «... Տիրոջ օրը այնպես պիտի զա, ինչպես գողը գիշերվա մեջ: Որովհետև, երբ ասեն, թե խաղաղություն և ապահովություն է, այն ժամանակ հանկարծակի կործանում պիտի հասնի նրանց վրա՝ հոյի կնոջ երկունքի պես, ու չպիտի փրկվեն» (1 Թես. 5:2-3):

Այնուհետև կլինի համաշխարհային սով, որը ներկայացված է սև ձիով: Աննախամբերքի գինը չափազանց բարձր կրառնա, և սովորական մարդկանց համար անհնարին կլինի իրենց ընտանիքների համար բավականաչափ կերակոր գնելը: Ուստի իիվանդությունն ու մահը անխուսափելի կլինեն: Ակնհայտ է, որ դեռևս հարուստ մարդիկ կլինեն, որոնք կկարողանան շարունակել շքեղության մեջ ապրել («ձերն ու գինին», տե՛ս Հայտ. 6:6):

Դեղնավուն ձին ներկայացնում է մահը: Կարդում ենք, որ նրան իշխանություն արվեց երկրի մեկ չորրորդին սպանել սովով, ժամատախտով և երկրի գազաններով (Հայտ. 6:8): Սա նշանակում է, որ մոտավորապես 1,500,000,000 մարդ սպանվելու է: Որքա՞ն սարսափելի է մտածել, որ այս մարդկանց մեծամասնությունը, եթե ոչ բոլորը, անհավատներ են, որոնց հոգիները գցվելու են դժոխք (կամ Հաղես, տե՛ս Հայտ. 6:8):

Գառնուկը բացելու է հիմնգերորդ կնիքը, որը ներկայացնում է հայածանքները: Հովհաննեսը զոհասեղանի տակ տեսավ այն մարդկանց հոգիները, որ սպանված էին Աստծո Խոսքի ու այն վկայության համար, որ պահում էին (Հայտ. 6:9): Նրանք աղաղակում էին բարձրյալ Տիրոջը, որ վրեժ առնի երկրի բնակիչներից: Սա այսօրվա քրիստոնյաների լեզուն չէ: Ինչպես նախորդ սերտողություններում նշեցինք, Տեր Հիսուսը սովորեցրեց սիրել քշնամիներին ու աղոթել հալածողների համար, և դա հենց այն է, ինչ Ստեփանոսն

արեց, երբ քարկոծելով սպանեցին նրան (տե՛ս Մատթ. 5:44, Գործը 7:60): Սակայն այս տեսիլքում Հովհաննեսն այլևս շնորհի դարաշրջանում չէ, այլ դատաստանի օրում, Տիրոջ օրում: Չոհասեղանի տակ եղած մարդկանց հոգիները հավատացյալների հախտակությունից հետո դարձի եկած մարդկանց հոգիներն են, և շատերը կարծում են, որ նրանք հիմնականում իրեա հավատացյալներ են, քանի որ օգտագործում են իրեաներին բնորոշ լեզու: Հավանաբար յոր տարվա ավարտին կլինի ևս մեկ «հափշտակություն», և այդ ժամանակահատվածում բոլոր մահացած հավատացյալները կտուանան փառավոր մարմիններ ու կրագավորեն Քրիստոսի հետ (տե՛ս Հայտ. 6:11, 20:4-6):

Այնուհետև Հովհաննեսը տեսավ, թե ինչպես է Գառնուկը բացում վեցերորդ կնիքը, որը մեծ երկրաշարժ է առաջացնում: Թվում է, թե այդ ժամանակ նույնպես շատ մարդիկ կապանվեն, ու երկրի բնակչության թիվը հավանաբար կհասնի կեսի: Ոմանք առաջարկում են, որ 6:12-14-ի նկարագրությունը բնորոշ է միջուկային պատերազմին: Գաղտնիք չէ, որ այսօր շատ երկրներ ունեն կամ զարգացնում են միջուկային զենքը և այն օգտագործելու են ծայրահեղ իրավիճակներում, օրինակ՝ Մեծ Աեղության ժամանակաշրջանում: Հովհաննեսն իր տեսածը կարող էր նկարագրել իր օրվա գիտելիքի շրջանակում: Հնարավոր է, որ Հովհաննեսի տեսած երկնիքից թափված ասուները միջուկային հրթիռներ լինեն, որոնք տիեզերական կայանից են արձակվում: Երեսուն տարի առաջ առնվազն մեկ երկիր ուներ նման հնարավորություն, սակայն այդ ժամանակից ի վեր տեխնոլոգիան էապես զարգացել է:

Զիրենյաց սարում Տեր Հիսուսը պատմեց այդ սարսափելի իրադարձությունների մասին. «Բայց այս բոլորը՝ ցավերի սկիզբն է» (Մատթ. 24:8): Եթե դրանք սկիզբն են, ապա ի՞նչ է լինելու վերջը: Այն գրեթե ստիպում է մեզ զգալ Դանիելի պես, երբ նրան տրվեց հիանալի տեսիլք: Մենք կարդում ենք. «Եվ Ես՝ Դանիելս, ուշաբափեցի ու հիվանդ էի մի քանի օր. այնուհետև վեր կացա և թագավորի գործը կատարեցի, ապշանքի մեջ էի տեսիլքի պատճառով, բայց չկար մեկը, որ այն հասկանար» (Դան. 8:27):

## Արդյո՞ք մահը վերջն է և թես. 4

**Ե**թե երբեմ մասնակցել ես բաղման արարողության, ապա կհասկանաս Պողոսի գրածը Ս. Թես. 4:13-18-ում: Անշուշտ, քրիստոնյաները պետք է զգան ցավ ու վիշտ, արցունք թափեն սիրելիի համար, բայց ոչ թե սպան այնպես, ինչպես անհավատները՝ աշխարհի անհույս մարդիկ: Նույնիսկ Հիսուսը լացեց, երբ իր լավագույն ընկերներից մեկը՝ Ղազարոսը, մահացավ (Հովհ. 11:32-36): Բոլորս պետք է անցնենք մահվան ստվերի հովտով, բայց մեր վշտի մեջ մենք պետք է Քրիստոսով կենդանի հույս ունենանք:

«Օրինյալ է Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, որ իր առատ ողորմության համեմատ մեզ վերատին ծնունդ տվեց դեպի կենդանի հույսը՝ Հիսուս Քրիստոսի՝ մեռելներից հարություն առնելով» (Ս. Պետ. 1:3):

Թեսաղոնիկեցի հավատացյալները վշտի մեջ էին և ուզում էին իմանալ, թե իրենց մահացած քրիստոնյա հարազատների հետ ինչ է լինելու, երբ Քրիստոսը վերադառնա: Պողոսը նրանց վստահեցնում էր, որ սկզբում մեռելները հարություն կառնեն, իսկ հետո նրանց կմիանան բոլոր կենդանի հավատացյալները: Ուշագրավ է, թե սպիտակ մեջ եղող հավատացյալներն ինչ երեք միսիքարություն ունեն:

### ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՀՔ ՔՈՒՆ Է

«Հիսուսով քննել» նշանակում է, որ Հիսուսն է քննեցրել, և հոգին, անշուշտ, Աստծո մոտ է:

«Եվ հողը հետ չի դարձել երկրին, ինչպես որ էր, և հոգին հետ չի դարձել Աստծո մոտ, որ տվել էր» (Ժող. 12:7):

Մարմինն է, որ քնում է և սպասում հարությանը:

«Ահա մի խորհուրդ եմ ասում ձեզ. «Ոչ թե ամենքս կննջենք, այլ ամենքս կփոխվենք հանկարծ, մի ակնքարբում՝ հետին փողի ժամանակ, որովհետև փողը կփչի, և մեռելները հարություն կառնեն ան-

պականելի, և մենք կփոխվենք» (Ա Կորնթ. 15:51-52):

## **ԵՐԿՆՔՈՒՄ ՎԵՐԱՍԻՎՎՈՐՈՒՄ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ**

Մահը շատ դժվար ու ցավալի է այն առումով, որ հեռանում ենք մեր սիրելիներից, բայց Հիսուսն ասաց, որ բոլորն իրար տեսնելու են, ոմանք՝ երկնքում, ոմանք էլ դժոխքում (տե՛ս Ղուկ. 13:29, 16:22-23, 27-27):

## **ԱՍՏՎԱԾ ՄԵԶ ՆՈՐ, ՓԱՌԱՎՈՐՎԱԾ ՄԱՐՍԻՆԵՐ Է ՏԱԼՈՒ**

«Բայց մեր քաղաքականությունը երկնքում է, որ այնտեղից սպասում ենք Փրկչին՝ Տեր Հիսուս Քրիստոսին, որը կնորոգի մեր խոնարի մարմինը, որ իր փառավոր մարմնին կերպարանակից լինի այն զորությունով, որ կարող է ամեն բան հնազանդեցնել իրեն» (Փիլ. 3:20-21):

Աստվածաշունչն ասում է, որ գերեզմանում դրվող դին հունձքին սպասող սերմի նման է (Ա Կորնթ. 15:35-38, 42-44):

Անշուշտ, մարմինը հողին է վերադառնում և բնության մաս դառնում: Աստվածաշնչում ոչ մի տեղ գրված չէ, որ Աստված հարություն է տալիս հավատացյալի մարմնի յուրաքանչյուր մասնիկին: Աստվածաշունչն ասում է, որ հարուցյալ մարմինը թաղված մարմնին նըման է այնպես, ինչպես մի սերմից ծլած բույսի սերմերն են նման հողում ցանված սերմին:

Հովհ. 11:23-27-ում կարդացե՛ք Մարթայի և Հիսուսի զրույցը:

«Հիսուսն ասաց. «Քո եղբայրը հարություն կատնի»: Մարթան պատասխանեց. «Գիտեմ, որ հարություն կատնի հարության մեջ՝ հետին օրը»: Հիսուսը նրան ասաց. «Ես եմ հարությունը և կյանքը. ինձ հավատացողը թեև մեռնի էլ, կապրի: Եվ նա, ով որ կենդանի է և ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի. հավատո՞ւմ ես սրան»: «Այո՛, Տե՛ր,- ասաց Մարթան,- ես հավատացել եմ, թե դու ես Քրիստոսը՝ Աստծո Որդին, որ պեսք է աշխարհ գայիր»»:

Սիրելի՝ ընթերցող, դու հավատո՞ւմ ես դրան, թե՞ կասկածում ես: Հիսուսն ասաց. «Նա, ով հավատում է ինձ, հավիտյան կապրի»:

## **Մեկ մարդու պես հավաքվել**

Կարդացե՛ք Նեեմիա 8:1-10-ը:

2020 թվականն ինձ համար շատ նշանակալից տարի էր: Տասը տարի առաջ առաջին անգամ ոտք դրեցի Հայաստան: Այդ ժամանակից ի վեր մի քանի անգամ այցելել եմ Հայաստան: Մեր այցելությունները ներառում էին Արցախի տարածքը, որը վերջին տասը տարիների ընթացքում մի քանի առիթներով եղել է մեր հիմնական ուղղությունը:

Դժբախտաբար, անցյալ տարվա սեպտեմբերի վերջին Արցախի և հարևան Աղբքեջանի միջև քաղաքական լարված իրավիճակը վերաճեց լիակատար պատերազմի: Մենք ծրագրում էինք Արցախում լինել մեր միսիոներական առաքելության ժամանակ: Բոլորս տեղյակ ենք, թե ինչպես է COVID-19-ը ազդել ամբողջ աշխարհի վրա: Այս ամենին մեջ Տերն իր շնորհըն հնարավորություն տվեց մեզ՝ շարունակելու հաղորդակցությունը ու աղոթելու Քրիստոնությունը մեր սիրելիների հետ համացանցի տարբեր հարթակների միջոցով:

Նեեմիան ողբում էր իր երկրի ու ժողովրդի համար: Նա առաջնորդվեց վերադառնալու Երուսաղեմ ու կառուցելու նրա պարհապը: Տերն իսկապես տվեց նրա սրտի ցանկությունը: Նա ամենասկզբից էլ Նեեմիայի հետ էր, նույնիսկ երբ նա հեթանոս քազավորին տվեց աստվածատուր պատասխանը:

Կարդացե՛ք Նեեմիա 2:4-5-ը:

Չնայած Նեեմիան հաջողակ էր պարիսպը կառուցելու մեջ, սակայն նրա վերադարձի նպատակը մարդկանց սրտերը դեպի իրենց Աստծուն դարձնելն էր: Այս տեքստում պարսպի կառուցումն ավարտված էր, բայց Աստծո ժողովրդի կառուցումը դեռևս ընթացքի մեջ էր, ուստի ամբողջ ժողովուրդը մեկ մարդու պես հավաքվեց:

## **Մեկ մարդու պես**

Կարդացե՛ք Նեեմիա 8:1-ը:

Նեեմիա նշանակում է «Եհովան սփոփում է». շատ տեղին ու ժամանակին ասված հիշեցում, քանի որ բոլորս Եհովայի մխիթարության կարիքն ունեն: Ծեշտը դրված է միասնության վրա: Տիրոջ ցանկությունն իր ժողովրդի վերաբերյալ հստակ է:

Եփես. 4:3-6-ը սովորեցնում է, որ Տիրոջ մահանալուց, հարություն առնելուց և Հոր մոտ վերադառնալուց հետո Ժողովուրդը մեծ ակրն-կալիքով սպասում էր Նրա խոստմանը: Նրանք դա արեցին՝ միավորելով իրենց սրտերը աղոքքում:

Գործը 1:14-ում ասվում է. «Սրանք բոլորը միաբանությամբ շարունակ աղոքում էին և աղաչանք անում...»: Որպես «մեկ մարդ» հավաքվելը շարունակվեց Հոգեգալուստից հետո:

Գործը 2:46-47-ը սովորեցնում է, որ աշակերտները շարունակում էին «ամեն օր միաբան լինել տաճարում»: Միաբանությամբ հավաքվելը ենթադրում է մտքի ու սրտի մեկություն: Այս բառը, որին հաճախ հանդիպում ենք Գործը Առաքելոց գրքում, հստակ հիշեցում է այն մասին, որ նույնիսկ երբ մեր սրտերը ծանրաբեռնված են մեր Ժողովրդի ու ազգի համար, մենք պետք է Եզրասի, Նեեմիայի ու Ժողովրդի նման գանք Աստծո առաջ, որպեսզի փնտրենք հավիտենական Աստծո երեսն ու բարեհաճությունը: (Տե՛ս նաև Գործը 4:24, 31-ը):

## **Մեկ գիրք**

Կարդացենք Նեեմիա 8:2-5-ը:

Աստծո բանավոր խոսքն այժմ դարձավ գրավոր: Այն Մովսեսից փոխանցվեց Հետուին:

Հետու 1:8-ում կարդում ենք. «Օրենքի այս գիրքը թող քո բերանից շենոանա՝, գիշեր ու ցերեկ մտածի՛ր դրա մասին, որպեսզի նրա մեջ ամբողջ գրվածքը պահես ու կատարես. քանի որ միայն այդ դեպքում գործերդ կրարգավաճեն, և հաջողություն կգտնես»: Տեր Աստված պահել է իր Խոսքը: Չնայած Խրայելի որդիները շեղվեցին իրենց Աստծուց, սակայն շատ տարիներ անց՝ Հովսիայի օրոք, գտան Օրենքի գիրքը:

Դ. Թագ. 22:8-13-ը արձանագրում է Օրենքի գրքի վերագտնումը: Եզրասը այն կարդալու ու հավիտենական Աստծո մասին հոչակելու եզակի ուրախությունն ունեցավ:

## **Մեկ կոչում**

Նեեմիա 8:6-ում կարդում ենք. «Եվ Եզրասն օրինեց ՏԻՐՈՂԸ՝ մեծ Աստծուն, և ամբողջ ժողովուրդը պատասխանեց. «Ամեն, ամեն», իրենց ձեռքերը բարձրացնելով, և խոնարհվելով երեսնիվայր՝ մինչև գետին երկրպագեցին ՏԻՐՈՂԸ»: Հավիտենական Աստծուն երկրպագելն ու ծառայելը յուրաքանչյուր Աստծո զավակի բարձր կոչումն է: Չարի ցանկությունն է կենդանի Աստծուց մեր ուշադրությունը շեղելը: Մենք դա տեսնում ենք զայրույթի, իհասքափության և վրեժի տեսքով:

Սա այն է, ինչով սատանան փորձեց Աստծո Որդուն: Դուկաս 4:6-8-ում գրված է. «Սատանան ասաց Նրան. «Այս բոլոր իշխանությունն ու նրանց փառքը Զեզ կտամ, որովհետև ինձ է տրված, և ում կամենամ՝ կտամ: Ուստի, եթե ինձ երկրպագես, այդ բոլորը Զոնը կլինի»: Հիսուսը պատասխանեց ու ասաց նրան. «Ետևս անցի՛ր, Սատանան՝ քանի որ գրված է՝ «Քո Տեր Աստծուն պաշտես և միայն Նրան ծառայես»»: Տեր Հիսուսն Իր պատասխանի մեջ օգտագործում է պաշտես և ծառայես բառերը, և հետաքրքիր է, որ ծառայել բառը ենթադրում է նաև երկրպագություն:

## **Մեկ պատգամ**

Նեեմիա 8:7-8-ում կարդում ենք նրանց մասին, ովքեր կարդում էին Աստծո Օրենքի գիրքը և հստակորեն ու բացատրություն տալով՝ ըմբռունելի էին դարձնում ընթերցվածքը: Եզրասը կարդաց նոյն գրքից և փոխանցեց պատգամը: Եվ մինչ կարդում էին այն, Աստծո Հոգին Աստծո մարդկանց հասկացողություն էր տալիս:

Պատգամը քարոզվեց բեմից (Նեեմ. 8:4). Մի բառ, որն օգտագործվում է միայն մեկ անգամ Աստվածաշնչում: Ըստ Էության այն վերաբերում է փայտից պատրաստված աշտարակ հիշեցնող կառույցին:

## **Մեկ ճշմարիտ Աստված**

Նեենիա 8:9-10-ը խոսում է Աստծո Խոսքի՝ ժողովրդի վրա ունեցած ազդեցության մասին: Սա Աքրահամի, Խահակի և Հակոբի միակ ճշմարիտ Աստծո միակ պատգամն էր: Նա Մովսեսի Աստվածն էր, ով Ինքն Իրեն հայտնեց որպես «Ես եմ»-ի (Ելից 3:13-15): Նա մեր Տեր Հիսուս Քրիստոսի Աստվածն ու Հայրն է:

## **Մեկ հույս**

Ժողովրդին ոչ թե լացելու կամ սգալու, այլ ուրախանալու կոչ է արվում այն հույսով, որը ճշմարիտ Աստծո հանդեպ ունեն: Արցախի մեր այցելած որոշ վայրեր հիմա ավերակ են դարձել: Դրանք վերականգնված տեսնելու մեր ցանկությունը նման է Նեենիայի ցանկությանը: Այնուամենայնիվ, մեր կոչումն ու մանդատը՝ որպես Աստծո ժողովրդի, չի փոխվում: Մենք պետք է կրենք Նրա Որդու՝ Տեր Հիսուս Քրիստոսի պատկերը: Մենք պետք է ապրենք աստվածահաճո կյանք, հռչակենք պատգամը, քարոզենք Ավետարանը. մենք մեկ առաքելություն ունենք, որը նույնիսկ հրեշտակները չունեն: Դա անելիս թող Տիրոց ուրախությունը լինի մեր գորությունը:

Հիշենք այս համարը. «Որովհետև, ինչ որ սկզբից գրվեց, մեր սովորելու համար գրվեց, որ մենք համբերության և Գրքերի միսիթառության միջոցով հույս ունենանք» (Հոռմ. 15:4):

Դանիել Զեյմս

## **Սաղմոս 74:1-3,7-8**

1. **Ո՞վ Աստված, ինչո՞ւ մեզ բոլորովին մերժեցիր, ինչո՞ւ է բարկությունդ մխում Քո արոտի ոչխարների վրա:**
2. **Հիշե՛ր Քո ժողովքը, որ ի սկզբանե գնեցիր, Քո ժառանգության ցուպը, որ Դու փրկագնեցիր, այս Միոն լեռը, որտեղ բնակվեցիր:**
3. **Բարձրացրո՛ւ Քո քայլերը դեպի մշտնջենական ավերմունքները՝ թշնամու կատարած անօրենությանը Քո սրբարանում:**
7. **Հրի մատնեցին Քո սրբարանը. գետնի հետ հավասարեցրին Քո անվան ընակարանը:**
8. **Իրենց սրտերում ասացին. «Եկե՛ք կործանենք նրանց բոլորին»: Երկրի մեջ եղած Աստծո բոլոր հավաքատեղիներն այրեցին:**

## **Հավատացյալի կյանքը՝ որպես Երրորդության արտացոլք**

### **Միաբան Ընտանիք**

Չանի որ Աստված միակ միաբան Ընտանիքն է, ապա Տեր Հիսուսն ու առաքյալները հավատացյալներին խրախուսում են արտացողել աստվածային Ընտանիքը լիահավատ հաղորդությամբ, ինչպես Տեր Հիսուսն էր հստակ սովորեցնում, երբ լվանում էր աշակերտների ոտքերը. «Արդ, եթե Ես՝ ձեր Տերն ու Վարդապետը, ձեր ոտքերը լվացի, դուք էլ պետք է միմյանց ոտքերը լվանաք: Որովհետև Ես ձեզ օրինակ տվեցի, որ դուք անեք, ինչպես Ես ձեզ արեցի» (Հովհ. 13:14-15):

### **Ճշմարտությունը խոսել սիրով**

Եռամեկ Ընտանիքի հիմնական առանձնահատկությունը ճշմարտությունը սիրով խոսելն է: Սա քրիստոնյաների շրջանում նպաստում է կարեկցանքի առաջացմանը, երբ նրանք արտացողում են աստվածային Ընտանիքը: Պողոս առաքյալը Գաղատացիներին ուղղված Թուղթը գրում էր Եռամեկ Ընտանիքի զգացումով՝ հաճախ խոսելով Հոր, Որդու և Սուրբ Հոգու մասին (Գաղ. 3:13-14, 4:6, 5:5-6, 22-24): Հռոմեացիներին ուղղված թղթում նաև կիրառում է Երրորդության եռակի որվագիծ փրկության ծրագիրը ցույց տալու համար:

### **Երրորդության վարդապետությունը՝ որպես անձնական հարաբերությունների հիմք**

Ծիշտ է, որ Երրորդություն բառն Աստվածաշնչում չկա: Դա առաջին անգամ օգտագործել է Տերտուլիանոսը 2-րդ դարավերջին, և դա լայն կիրառում է գտել 4-րդ և 5-րդ դարերում: Երրորդության պատմական վարդապետության համար հիմնարար է երեք կետ:

Կա միայն մեկ Աստված,

Հայր, Որդի և Սուրբ Հոգի. նրանցից յուրաքանչյուրը լիովին ու հավիտենապես Աստված է,

Հայր, Որդի և Սուրբ Հոգի. յուրաքանչյուրն առանձին Անձ է:

Աստվածաշունչը ոչ մի տեղ այս կետերի համակցությունը բացահայտ կերպով չի ուսուցանում: Ինչևէ, կարելի է պնդել, որ Երրորդության վարդապետությունն Աստծո աստվածաշնչյան վկայության սպառիչ բացատրություն է Տեր Հիսուսի ծառայության, մահվան, հառության ու փառավորման լույսի ներքո: Երրորդություն նշանակում է, որ մեկ Աստծո էության ու գործունեության մեջ կան երեք առանձին Անձեր՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի: «Երրորդության բանաձևը» արտահայտվում է Մեծ Համաձնարարության մեջ (Մատթ. 28:19) և ԲԿորմբ. օրինության մեջ. «Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, Աստծո սերը և Սուրբ Հոգու հաղորդությունը ձեզ բոլորիդ հետ լինի: Ամեն» (ԲԿորմբ. 13:13):

## **Շնորհի, սիրո և հաղորդության եռապատիկ արտահայտումը**

Պողոս առաքյալը ոչ միայն աղերսում էր Աստծո ապահովության լիությունը Կորնթոսի հավատացյալներին, այլ նաև թոռուցիկ կերպով ներկայացնում էր Երրորդության վարդապետության վերաբերյալ ամենահատակ նկարագրություններից մեկը Նոր Կտակարանում: Որոր, Հոր և Սուրբ Հոգու աստվածությունը հաստատվում է մեկը մյուսի նկատմամբ նրանց հարաբերությունը ներկայացնելով: Յուրաքանչյուրի առանձնահատուկ բնույթը ցույց է տրվում շնորհի, սիրո ու հաղորդության եռապատիկ արտահայտման մեջ նշված իմբնուրույն գործունեությամբ:

## **Ոչ մի եսակենտրոնացում**

Իր թղթի ավարտին Պողոս առաքյալը մատնանշում է կորնթացիների բազում հոգսերի պատասխանը: Նրանցից յուրաքանչյուրի մեջ բնակվող Սուրբ Հոգին պետք է նրանց գորացնի արդար ապրելու համար: Բացի այդ՝ Հոգին պետք է նրանց հաշտեցնի իրար հետ: Իրար դեմ պայքարելու փոխարեն Նրանք պետք է սիրեն ու քաջալերեն միմյանց (ԱԿորմբ. 12:20): Նրանք կարիք ունեին ոչ թե եսակենտրոնացման, այլ Աստծո շնորհի, ոչ թե հակամարտության, այլ Աստծո սիրո, ոչ թե տարածայնությունների, այլ հաղորդության:

Դոկտ. Զեսլով Բասսարա

## Աստված ամենուրեք Է

**Փ**ռստատանը, հերթի մեջ կանգած, Ֆիլիս Հոպը մտածում էր հիվանդ բարեկամի մասին, երբ հանկարծ սկսեց լսելի ձայնով աղորել նրա համար: Նրա առջև կանգնած տարեց մարդը ժպտաց և ասաց.

- Ես էլ երբեմն այդպես եմ անում:
- Ի՞՞նչ, - հարցրեց երիտասարդ կինը:
- Խոսում եմ ինքս ինձ հետ, - պատասխանեց մարդը:
- Ես ինքս ինձ հետ չեմ խոսում, այլ շատ տարիներ առաջ տատիկից սովորածն եմ անում,- ասաց Ֆիլիսը: - Ծնողներս աշխատում էին, ուստի ես տատիկիս մոտ էի մնում: Նա կապուտաչյա փոքրամարմին կին էր, որը երկար ճերմակ մազերը գունդ արած պահում էր գլխի ետևում: Ինձ հետ չեր կարողանում խաղալ, բայց իր մանկության հուշերից էր պատմում ու գիրք էր կարդում ինձ համար: Կեսօրին ինձ պառկեցնում էր անկողնու մեջ, որ քննեմ, և դուռը փակում էր: Մինչ տնային գործերն էր անում, լսում էի, թե ինչպես էր ինքնիրեն խոսում, բայց չի հասկանում ասածը: Վերջապես մի օր հարցրի, թե ո՞ւմ հետ է խոսում: Շատ պարզ կերպով պատասխանեց՝ Աստծոն հետ:

- Բայց Նա երկնքում չէ<sup>o</sup>, - հարցրի՝ առաստաղը ցույց տալով:
- Անուշիկս, Աստված ամենուրեք է և ամեն բառ լսում է, - ասաց տատիկս վստահելի ոճով:

Երբ իինգ տարեկան էի, ծախս ոտքիս վրա շատ վարակիչ վերք ունեցա: Ոտքս ուռավ և ծիածանի բոլոր գույները ստացավ, ջերմությունս բարձր էր: Այդ ժամանակ միակ դարմանը սառը լարով քըրցոց դնելը էր: Երբ քմիշկը տուն եկավ, բոլորը սկսեցին փսխալով խոսել: Իմացա, որ լուրջ բան կար: Այդ օրերին ծնողներս աշխատանքի չգնացին, և տատիկս մեր տուն եկավ՝ մնալու: Նա նստում էր անկողնուս մոտ դրված մեծ բազկաթողին: Նոյնիսկ բարձր ջեր-

մության մեջ լսում էի նրա մրմունջը: Մի գիշեր արթնացա, երբ նա ոտքիս վերքն էր վիրակապում: Ոտքս շատ տաք էր և բնականից եռապատիկ ավելի ուռած:

Նա նստեց իր աթոռին և սկսեց խոսել: Ականջս սրեցի, որ լսեմ ասածը: «Տե՛ր Աստված, - ասաց նա, - այս աղջնակը շատ վաստ վերք ունի: Բժիշկը օգնում է, բայց գիտեմ, որ Դու կարող ես նրան բուժել: Թանկագի՞ն Տերս, այդ է իմ խնդրանքը Քեզնից»: Թեև պետք է սարսափեի լսածիցս, բայց չվախեցա: Օրորի պես այնքան քաղցր և մեղմ էր տատիկիս ձայնը, որ քննեցի:

Հաջորդ առավոտ բժիշկը դարձյալ եկավ և շատ լրջությամբ բարի լուս ասաց ինձ: Զերմությունս չափեց և սրունքիս նայելով՝ բարձրածայն կանչեց ծնողներիս.

- Ծուտ եկե՛ք և տեսե՛ք, - ասաց զարմացած:

Ես վիզս թեքեցի, որ տեսնեմ պատահածը: Ոտքս բնական էր դարձել, ոչ ուսուցք կար և ոչ էլ կարմրություն:

- Նայե՛ք, Ֆիլիսը առողջանում է, - ասաց բժիշկը, - զերմությունն ամբողջովին իջել է:

Այդ օրը տատիկիս աղոթքի մասին ասացի մայրիկիս.

- Այս անգամ ամեն մի բառը լսեցի, մա՛մ:

Մայրս ձեռքս ձեռքի մեջ վերցրեց ու ասաց.

- Աստված էլ լսեց, աղջիկս:

Գիտեմ, որ Աստված կլսեր այդ բառերը, եթե նույնիսկ անլսելի լինեին դրանք և մնային տատիկիս սրտում, բայց տարիների ընթացքում ես էլ նրա պես սկսեցի խոսել Աստծո հետ այն գիտակցությամբ, թե Տերը ինձ հետ է ամեն տեղ. Նա ամենուրեք եղող Աստված է, նույնիսկ փոստատանը, երբ կանգնած եմ հերթի մեջ:

«Եվ պիտի լինի, որ նրանք դեռ չկանչած, Ես պիտի պատասխանեմ, և քանի դեռ խոսում եմ՝ պիտի լսեմ» (Եսայի 65:24):

Քաղված՝ «Օրինաբեր նոնենին» գրքից

## Հավատք, հույս, սեր

Երբ որ փորձությունն անկոչ հյուրի պես  
Քեզ այցի կգա չուզած ժամանակ,  
Երբ որ փրկությունը դանդաղ ուղտի պես  
Կուշանա, և դու կմնաս մենակ,  
Չորտմես հոգով ու չդժգոհես,  
Պետք է հավատաս, հուսաս և սիրես:

Երբ սիրտդ թաղվի ծանր վշտի մեջ,  
Խեղճ, թափառական ու անտեր մնաս,  
Չլինի մեկը ողջ աշխարհի մեջ,  
Որից մի թաժակ պաղ ջուր ստանաս,  
Չորտմես հոգով ու չդժգոհես,  
Պետք է հավատաս, հուսաս և սիրես:

Սիգուցե կորցնես մարդկանց թանկագին,  
Ու առանց ընկեր շրջես գլխիկոր,  
Մշուշը թախծոտ պատի քո հոգին,  
Դառնության ծովից ըմպես օրեցօր:  
Չորտմես հոգով ու չդժգոհես,  
Պետք է հավատաս, հուսաս և սիրես:

Համբերությունի կհատվի հանկարծ,  
Կասկածի քոյնը կմաշի հոգին.  
Հաստատ մինչև մահ դու գնա անդարձ,  
Սի՛ քող ոսխին տեղ գտնի կողքին:  
Հիշի՛ր՝ զուր է, եթե աշխարհն էլ տիրես,  
Բայց շհավատաս, շհուսաս, շսիրես:

Գառնիկ Աբրեյան